ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (այսուհետ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26.11.2019թ.

Կառավարման խորհրդի նիստին (այսուհետ՝ Խորհրդի նիստ) մասնակցեցին՝

Նախագահող՝ Ֆ.Ցոլակյան – ՀՀ ԱԻՆ Նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ.Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Վերմիշյան - Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ա.Կարախանյան – ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի Ժ/Պ

Ա.Պետրոսյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի խորհրդի անդամ

Ա.Կարապետյան - «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Ս. Թովմասյան-« Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան

Խորհրդի նիստին չեն մասնակցել խորհրդի անդամներ՝

Ս. Պապիկյան- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Կ. Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Ա.Դանիելյան- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ

Քվորումն ապահովված էր:

Կառավարման խորհրդի նախագահի հրավերով, նիստին մասանկցում էր ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ մայոր Վ.Գաբրիելյանը:

Նիստին ներկա էին՝ ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար Գեղամ Շախբազյանը, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնակատար Տ.Հակոբյանը, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Գ. Գիլոյանը, Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ Ե.Զոհրաբյանը:

Կառավարման խորհրդի քարտուղար՝ Ն.Մկրտչյան:

ՕՐԱԿԱՐԳ

Օրակարգը հաստատվեց միաձայն:

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին:

Զեկուցող՝ Գ. Շախբազյան Տեսչական մարմնի ղեկավար

2. Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ստուգումների 2020թ-ի տարեկան ծրագիրը՝ համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի:

Զեկուցող՝ Գ. Շախբազյան

3. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու նախագծին:

Զեկուցող՝ Գ. Շախբազյան

Խորհրդի նիստի նախագահողն ողջունեց ներկաներին և առաջարկեց մինչ օրակարգի հարցերին անդրադառնալը լսել նիստին հրավիրված ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն Վ. Գաբրիելյանի զեկույցը՝ ՀՀ տարածքում արձանագրված հրդեհների վիճակագրության և հնարավոր ռիսկերի վերաբերյալ:
Պարոն Գաբրիելյանը ներկայացրեց ամփոփ տեղեկատվություն ՀՀ Տարածքում արձանագրված հրդեհների վերլուծության, դրանց հիման վրա հնարավոր ռիսկերի և առաջիկա տոներին ընդառաջ դրանց կանխարգելման ուղղությամբ հրատապ իրազեկման և խորհրդատվական աշխատանքների իրականացման անհրաժեշտության մասին: Կառավարման խորհրդի նախագահն առաջարկեց համատեղ հրամանով Տեսչական մարմնի և ՀՀ ԱԻՆ աշխատակիցներից ձևավորել աշխատանքային խմբեր և իրականացնել համատեղ իրազեկման և խորհրդատվական աշխատանքներ՝ բնակչության հրդեհային և տեխնիկական անվտանգության պատրաստվածությունը բարձրացնելու և հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով: Պարոն Գաբրիելյանը զեկույցի ժամանակ անդրադարձ կատարեց նաև հրդեհաշիջման աշխատանքներն իրականացնելու ժամանակ, հիդրանտներում ջրի բացակայության կամ ճնշման ցածրության խնդրին և դրա հետևանքներին, ինչի վերաբերյալ խորհրդի անդամ Ա. Ավանսեյանը պատրաստակամություն հայտնեց ուսումնասիրել «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագիրը՝

հնարավոր լուծումներ գտնելու նպատակով: Խորհրդի անդամ Վ. Վերմիշյանը, առօրեական և կարևոր համարեց նաև նոր կառուցվող շենքերում 85%-ից ոչ պակաս չայրվող շինանյութերի օգտագործման հարցը՝ նշելով որ աշխարհը գնում է այդ ուղղությամբ և բնագավառում նորմերի վերանայման կարիք կա: Տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանը , խորհրդին տեղեկացրեց, որ Տեսչական մարմի գործառույթների իրականացմամբ, արձանագրված են դեպքեր, երբ օբյեկտների փորձագիտական դրական եզրակացության առկայությամբ անգամ պահպանված չեն հրդեհային անվտանգության կանոնները և, որ նման օբյեկտներում իրականացված ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականցման արդյունքում տրվել են պարտադիր կատարման ցուցումներ, որոնք վերահսկվում են Տեսչական մարմնի կողմից:

Միևնույն ժամանակ տեղեկացրեց, որ Տեսչական մարմնի կողմից ավարտական ակտերի, շահագործման ակտերի ստորագրման գործընթացում խստագույնս ուշադրություն է դարձվում հրդեհային անվտանգության կաննոների պահպանմանը, ինչի մասին համապատասխան ցուցումներ են տրվում կառուցապատողներին, որոնք կատարվում են անվերապահորեն: Հարցի քննարկումն ավարտելուց հետո կառավարման խորհրդի նախագահը խոսքը փոխանցեց Տեսչական մարմնի ղեկավարին՝ օրակարգում նշված հարցերի ներկայացման համար:

1 ՀԱՐՑ ԱՌԱՋԻՆ

Տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Զեկուցողը տեղեկացրեց, որ մեթոդաբանությամբ կանոնակարգվում են ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրառման հետ կապված ընդհանուր մոտեցումները, այդ թվում՝ սահմանվում է ռիսկը, ռիսկի հաշվարկման ձևը և ռիսկայնությունը որոշող չափանիշները: Ներկայացնելով նախագիծը Գ. Շախբազյանը տեղեկացրեց նաև, որ վարվում է Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառներում գործող տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազա՝ ըստ գործունեության ոլորտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների: Կառավարման խորհրդի անդամ Վ.Վերմիշյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած գերատեսչությունում մանրամասնորեն ուսումնասիրվել է ներկայացված նախագիծը, և արժանացել է իրենց հավանությանը: Կատարվել է շատ լավ աշխատանք: Կառավարման խորհրդի անդամ Ս. Թովմասյանը նշեց, որ քաղաքաշինության ոլորտում ներկայացված ռիսկայնության հաշվարկման կարգը իր կողմից չի ընդունվում՝

մասնավորապես անդրադառնալով աղյուսակ 12-ին և 13-ին, որտեղ հիմնավորված չեն ինչպես շենքերի տեսակով պայմանավորված՝ գնահատման միավորները, այնպես էլ ռիսկայնության կատեգորիաների համար սահմանվող գործակիցները: Պարոն Թովմասյանը անհրաժեշտ համարեց ՀՀ կառավարության 4 հուլիսի 2001թ-ի N 596-Ն որոշումը որոշման մեջ ամբողջությամբ վերանայել օբյեկտներն ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգման ցանկերը, քանի որ դրանցով են պայմանավորված նաև շինարարություն իրականացնող տնտեսվարողների լիցենզիաների դասերը: Այլապես խնդրահարույց ցանկերի հիման վրա ընդունված այլ ակտերը նույնպես կարող են խնդրահարույց լինել : Նիստը նախագահողը ողջունեց առաջարկը և այն համարեց ընդունելի՝ հետագա հնարավոր փոփոխությունների կատարման ժամանակ կիրառելու համար: Միևնույն ժամանակ արձանագրելով, որ ներկայացված նախագիծը ամբողջությամբ համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին: Խորհրդի անդամ Ա. Ասոյանը տեղեկացրեց, որ ռիսկայնության որոշման երկու տարբերակ է կիրառվել՝ անհատական և ոլորտային: Պարոն Ա" Ասոյանը իր խոսքում ներկայացրեց նաև ոլորտային և անհատական ռիսկերը՝ մասնավորապես նշելով , որ **Ոլորտային ռիսկը** տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտների հետ կապված ռիսկի չափանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունն՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների: **Անհատական ռիսկը** տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտների հետ կապված ռիսկի չափանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ չափանիշները:

Հարցը դրվեց քվերակության:
Կողմ՝ 8 ձայն, դեմ 1 ձայն՝ Ա.Թովմասյան:

2 ՀԱՐՑ ԵՐԿՐՈՐԴ

Զեկուցող Գ. Շախբազյանը ներկայացրեց ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ստուգումների 2020թ-ի տարեկան ծրագիրը, համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի: Զեկուցողը ներկայացրեց, որ մեթոդաբանությամբ կազմվել է ստուգումների տարեկան ծրագիր, որը նախապես, խորհրդի քարտուղարի կողմից, ուղարկվել է կառավարման խորհրդի անդամների համաձայնությանը, ինչի հետ կապված որևէ առարկություն չի ստացվել: Զեկուցողը հայտնեց, որ հրդեհային անվտանգության ապահովման բնագավառի հետ կապված կա հիմնավոր անհրաժեշտություն կատարել ավելացում ցանկում, ինչն արժանացավ կառավարման խորհրդի անդամների հավանությանը: Ներկայացվեց նաև կառավարման խորհրդի անդամ Կ. Բրուտյանի գրավոր առաջարկը, այն է՝

ստուգումների ցանկը հաստատել մեթոդաբանության հաստատումից հետո:
Գ. Շախբազյանը տեղեկացրեց, որ ցանկն ամբողջությամբ կազմված է մեթոդաբանության հիման վրա, ռիսկերի գնահատման չափորոշիչների կիրառմամբ:
Կառավարման խորհրդի նախագահը տեղեկացրեց, որ ՀՀ ԱԻՆ-ը տիրապետում է հրդեհային անվտանգության պահպանման առումով ստուգման ենթակա ռիսկային օբյեկտների ցանկի, որոնք, իրենց կարծիքով ,ներկա պահին ռիսկային են և անհրաժեշտ է ներառել ստուգումների ցանկում: Հարցի հետ կապված խորհրդի անդամ Ա.Ասոյանը առաջարկեց՝
1. Գրությամբ Տեսչական մարմնի ղեկավարին ներկայացնել նշված ցանկը:
2. Ցանկում ընդգրկված սուբյեկտների ֆիլտրացիա/տեսակավորում կատարել՝ համաձայն մեթոդաբանության, և, եթե ներկայացված տնտեսավարողները կարող են ընդգրկվել ստուգումների տարեկան ծրագրում, ապա ավելացնել դրանք այնտեղ: Մյուս տնտեսավարողների դեպքում ցանկը առաջիկայում ներկայացնել ՀՀ վարչապետին՝ ստուգումներ իրականացնելու հանձնարարական ստանալու կամ տարեկան ծրագրում լրացում անելու նպատակով:
Հարցի հետ կապված՝ Տեսչական մարմնի ղեկավարը կառավարման խորհրդին տեղեկացրեց, որ 2019թ-ի ընթացքում ՀՀ ԱԻՆ նախարարի գրությամբ ներկայացված օբյեկետներում, Տեսչական մարմինը իրականացրել է ուսումնասիրություններ և հետազոտություններ, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական լայնածավալ աշխատանքներ:

Հարցը դրվեց քվեարկության
Կողմ՝ 9 ձայն, դեմ 0 ձայն:

3 ՀԱՐՑ ԵՐՐՈՐԴ

Զեկուցող Գ. Շախբազյանը ներկայացրեց ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի հաստիքացուցակում հաստիքների փոփոխություն կատարելու առաջարկը և անհրաժեշտությունը:

Կառավարման խորհրդի նախորդ նիստին արդեն իսկ ներկայացվել էր հիմնավորում՝ մարզերում գեոդեզիայի և հողօգտագործման համապատասխան մասնագետների բացակայության մասին (տարածքային ստորաբաժանումներում աշխատավարձն ավելի ցածր է՝ կառուցվածքային ստորաբաժանումների համեմատ, իսկ գեոդեզիստի մասնագիտություն ունեցող անձանց թիվը մարզերում սահմանափակ է և, որպես կանոն, այս մասնագիտությունն ունեցող անձինք վճարվում են բարձր՝ ի համեմատություն քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև փաստացի ամբողջ վերահսկողական գործառույթն իրականացնում է Տեսչական մարմնի Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչությունը):
Առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Կոտայքի տարածքային բաժնի կողմից իրականացվող և նախատեսվող ստուգումների, ինչպես նաև Տեսչական մարմնի

գործունեության վիճակագրական վերլուծությամբ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքն, որ տարածքային ստորաբաժնումն ունի միայն մեկ էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության գլխավոր մասնագետ, իսկ տարածաշրջանը էներգետիկայի և էներգասպառման բնագավառում Տեսչական մարմնի կողմից իրականացվող գործառույթների ծավալային առումով համարվում է 3-րդ մեծ մարզը, ուստի անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխությունները: Ընգծվեց նաև, որ նշված փոփոխությունները կատարվելու են նոր չափանիշներով գնահատված և դասակարգված պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո:

Հարցը դրվեց քվեարկության:
Կողմ՝ 9 ձայն, դեմ՝ 0 ձայն:

Արձանագրությունը կազմեց՝ ՀՀ ՔՏՀԱՏՄ կառավարման խորհրդի քարտուղար Ն. Մկրտչյանը: Արձանագրությունը բաղկացած է 6 (վեց) էջից:

ՀՀ ՔՏՀԱՏՄ կառավարման խորհրդի

նախագահ՝ **Ֆ.Ցոլակյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ն. Մկրտչյան**